ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 24-ին՝ չորեքշաբթի, ԺԱ օր Յինանց.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի:

Օրվա խորհուրդը Մայր տաճարի սրբազան կամարների տակ էր հավաքել հավատացյալների մի հոծ բազմություն, որը ս. պատարագի հոգեպարար հնչյունների տակ ապրում էր իր նահատակ հայրերի բյուր տառապանքները:

Ժամը 10.30-ին սկսվեց ս. պատարագի արարողությունը: Պատարագիչն էր արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը և հավատացյալների բազմությունը սգահանդես թափորով ուղղվեցին դեպի ս. Էջմիածնի շրջափակում մեծ Եղեռնի նահատակների հիշատակին կառուցված հուշարձանը, ուր կատարվեց հոգեհանգիստ:

Օրվա հիշատակի տոնախմբությունը ավարտվեց ներկաների կողմից խմբովին երգված «Հայր մեր»-ով և գեր. տ. Հայկազուն արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով: